ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/72 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գրասենյակային ապրանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02.06.2022թ. ժամը 11:30-ին էլեկտրոնային գնումների e-auctions համակարգի միջոցով

ք. Երևան

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արա Խաչատրյան

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

Բացակայում է հանձնաժողովի անդամ՝ Մարիամ Պողոսյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Սմարթլայն» ՍՊԸ
2	«Մայ Մարկետ» ՍՊԸ
3	«Յասոն» ՍՊԸ

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

3.1 Ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Նախահաշվային գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները					
		«Սմարթլայն» ՍՊԸ		«Մայ Մարկետ» ՍՊԸ		«Յասոն» ՍՊԸ	
		Վեռջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	48000	-	-	-	-	-	-
2	42000	35000	42000	34650	41580	-	-
3	32000	-	-	58333.34	70000	-	-
4	70000	58333.34	70000	83333.34	100000	58000	69600
5	25000	-	-	250000	300000	-	-
6	15000	-	-	20416.67	24500	-	-
7	14500	-	-	-	-	-	-
8	5000	-	-	6041.67	7250	-	-

4. Հակադարձ աճուրդի արդյունքում, յուրաքանչյուր չափաբաժնի մասով, համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության, հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

4.1 2-րդ չափաբաժի մասով «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

4"2 4-րդ չափաբաժնի մասով «Յասոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան, հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

5. Տվյալներ մերժված և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

5.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը՝ 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել.

- 2-րդ չափաբաժնի մասով «Մայ Մարկետ» ՍՊԸ-ին:
- 4-րդ չափաբաժնի մասով «Յասոն» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

5.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18"05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել «Սմարթլայն» ՍՊԸ-ի հայտը՝ 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

5"3 Հակադարձ աճուրդի արդյունքում «Մայ Մարկետ» ՍՊԸ-ի հայտը՝ 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով համակարգի կողմից մերժվել է նախահաշվային գինը գերազանցելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

6. Գնահատման արդյունքների մասին

6.1 Հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի 2-րդ և 4-րդ չափաբաժինների համար ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0:

6.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ գնման գործընթացը 1-ին և 7-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ ոչ մի հայտ չներկայացվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

6"3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնման գործընթացը 3-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 2, դեմ 0

Գնահատող հանձնաժողով՝

---------- Արա Խաչատրյան /նախագահ/

---------- Հարություն Մարտիրոսյան

---------- Անուշ Մարգարյան /քարտուղար/